

2018

ԷԶՍԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



Բարեկարգման ոլորտում 2018թ. կատարված աշխատանքները

Էջմիածնում ասֆալտբետոնե ծածկի պահպանման և բարեկարգման նպատակով 2018 թվականին իրականացվել են շուրջ 18,606 քմ ընթացիկ վերանորոգման և ասֆալտապատման աշխատանքներ:



18, 406 քմ

Փողոցների և բակային

տարածքների ասֆալտբետոնե ծածկի նորոգում



200 քմ

Մայրերի սալիկապատում



Արտաքին լուսավորություն է անցկացվել Ա. Մանուկյան, Չարենց, Տեղյան, Անդրանիկ թաղամասերում և Արագածի զանգվածի քոթեջներում



Հիմնովին

վերանորոգվել և վերագործարկվել է Մարիանե այգու ջրավազանը



Պատրաստվել և տարբեր բակերում տեղադրվել է թվով 15 թիկնակով նստարան

Նախադպրոցական կրթության համար ավելի հարմարավետ պայմաններ ստեղծելու նպատակով 2018 թվականին կատարվել են մանկապարտեզների հիմնանորոգման, նորոգման և գույքի թարմացման աշխատանքներ:

Մասնավորապես, սեպտեմբերին ամբողջությամբ հիմնանորոգվել է թիվ 14 «Ձնծաղիկ» մանկապարտեզի տանիքը, հին դռներն ու պատուհանները փոխարինվել են նոր մետաղապլաստե դռներով և պատուհաններով:



Հիմնովին վերանորոգվել է թիվ 13 «Ծիծեռնակ» մանկապարտեզի մնացյալ 2-րդ մասնաշենքի տանիքը



Թարմացվել է նաև մանկապարտեզների գույքը. մի շարք խմբեր համալրվել են նոր մահճակալներով:



Նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների մտածողությունն ու խոսքի ճիշտ զարգացումն ապահովելու համար քաղաքապետարանի ենթակայության բոլոր մանկապարտեզները համալրվել են ինտելեկտուալ և զարգացնող խաղերով, հեծանիվներով և բազում այլ ժամանցային խաղալիքներով:



- Կատարվել են ծառերի էտման և ձևավորման աշխատանքներ
- Սպիտակեցվել են փողոցների ծառերի բները
- Կատարվել է կենտրոնական փողոցների ոռոգման ցանցի նորոգման աշխատանքներ
- Մ. Խոբենացի փողոցի այգու դիմաց տեղադրվել են 8 հատ աճրևատարերի ցանցեր
- Վերանորոգվել են քաղաքի պուրակների ջրավազանները
- Որոշ փողոցներում տեղադրվել են արհեստական ռետինե խոչընդոտներ անվտանգ երթևեկության համար
- Վերանորոգվել է Տերյանի զբոսայգու ոռոգման համակարգը
- Անցկացվել են խողովակներ Ս. Հոփսիմե եկեղեցու դիմացի գազոններում
- Քաղաքում անվտանգ երթևեկությունն ապահովելու համար, որոշ տեղերում տեղադրել են ճանապարհային նշաններ /34 հատ/
- Պատրաստվել և տեղադրվել են Զվարթնոց թաղամասի ջրատարի անցումների համար ճաղավանդակներ՝ բնակիչների անցումն անվտանգ դարձնելու համար
- Զորավար Անդրանիկ - Կարճիկյան փողոցների խաչմերուկում անձրևաջրերի հեռացման համար հանվել, մաքրվել և տեղադրվել է 500 մմ խողովակը, ինչպես նաև կառուցվել է 2 հատ ջրահեռացման դիտահոր
- Մաքրվել և լուսավորվել է Զվարթնոց թաղամասի 8 դպրոցի դիմացի մայրուղու գետնանցումը
- Նորոգվել են վթարված խորքային պոմպերը Զվարթնոց և Չարենց թաղամասերում



ԿԱՆԱԶԱՊԱՏՈՒՄ



2018 թվականին Էջմիածնում տնկվել է շուրջ 300 դեկորատիվ ծառ, որից 200-ը՝ Էջմիածին-Արտիմեդ գյուղի ճանապարհի աջակողմյան մասում քաղաքապետարանի կողմից հիմնված, խնամվող անտառաշերտում:






2018-ին շարունակել ենք մեր քաղաքը վերածել ծաղկաստանի՝ ավելացնելով ծաղկային տարածքները դիմացկունությամբ և գեղեցկությամբ աչքի ընկնող ծաղիկներով. տեղադրվել է շուրջ 350 000 ծաղկասածիլ



Կոմիտասի անվան հրապարակի օղակաձև ծաղկանոցում տնկվել է «կանա» և «փիփերթ» տեսակի 1100 հատ ծաղկասածիլ

Էջմիածինն արդեն անցում է կատարել երկարաժամկետ զարգացման տեսլականների և դրանցից բխող ծավալուն ծրագրերի իրագործման փուլ: Համայնքի բնապահպանական մարտահրավերների մեղմման հարցում 2018-ին կարևոր ներդրում էր էներգախնայող համակարգը:



Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ծրագրերի շրջանակում Էջմիածնի քաղաքապետարանի կարիքները հոգալու համար տեղադրվեց գումարային 50 ԿՎՏ արևային ֆոտովոլտային կայան: Ծրագրի իրականացման արդյունքում քաղաքապետարանը հնարավորություն ունեցավ էլեկտրաէներգիայի ծախսը կրճատել ավելի քան 65 տոկոսով՝ միննույն ժամանակ կրճատելով ածխաթթու գազի արտանետումները:



«Մաքուր Հայաստան» և «Մաքուր մոլորակ» ծրագրի շրջանակներում քաղաքի կենտրոնում և ծայրամասերում անցկացվել են շաբաթօրյակներ:



Կատարված աշխատանքները դրական են գնահատվել ՀՀ տարածքային կառավարման և զանգացման նախարարի կողմից:



Աղբահանության և
սանիտարական մաքրման
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ



Այսօր աղբահանություն
իրականացվում է շուրջ 200 և ավելի
փողոցներից ու փակուղիներից և
185 բազմաբնակարան շենքերից:



Օրական 2 անգամ իրականացվում է
քաղաքի տարբեր հատվածներում
տեղադրված 300 մեծ և 330 փոքր
մետաղյա աղբարկղերի դատարկման
և բեռնաթափման գործընթաց:

Օրական տեղափոխվում է միջին հաշվով 100 տոննա աղբ



Քաղաքում աղբահանությունը, մաքրման աշխատանքները կատարվում են 20
անուն ինքնաթափերով և այլ մեքենաներով.

- ▶ Ջիլ -130 ինքնաթափ 10 հատ
- ▶ Գազ-53 ԿՕ 430 5 հատ (հատուկ տեխնիկա)
- ▶ Ջիլ-130 ջրցան 2 հատ (հատուկ տեխնիկա)
- ▶ Կամազ- 413 փոշեկուլ 1 հատ
- ▶ ԴՏ-75 բուլդոզեր 1 հատ
- ▶ ՋԻՍԲ էքսկավատոր 1 հատ (հատուկ տեխնիկա)



Հաշվետու ժամանակահատվածում վերանորոգվել է 27 բազմաբնակարան
շենքերի շուրջ 5390,5 մ² մակերես տանիք:

2453

- Էջմիածնի քաղաքապետարան ստացված դիմումների թիվը

2662

- Էջմիածնի քաղաքապետարան ստացված գրությունների թիվը

1906

- բնակիչ մասնակցել է ընդունելությանը

415

- դիմում ստացվել է սոցիալական տարբեր հարցերով

129

- բնակիչ դիմել է արխիվային տեղեկանքի, միջնորդագրի և այլ հարցերով

284

- ընտանիքի հատկացվել է դրամական օգնություն, որից

Բուժման վճար
162
քաղաքացու

Ուսման վճար
43
քաղաքացու

Սոցիալական տարբեր
հարցերով՝
79
քաղաքացու



Էջմիածնի քաղաքապետարանի նախաձեռնությամբ Հովհաննես Հովհաննիսյանի անվան կենտրոնական գրադարանում սոցիալապես խոցելի խմբերի համար կազմակերպվել են համակարգչային անվճար դասընթացներ: Ուսուցման ավարտին տրվել են վկայականներ:



Շարունակելով սոցիալական աջակցության թեման՝

Էջմիածնի մանկապարտեզներ հաճախող թվով 1260 երեխաներից 148-ը օգտվել են վարձավճարի արտոնությունից:

Երաժշտական դպրոցներում սովորող թվով 515 սաներից վարձավճարի արտոնությունից օգտվել են 47-ը, որից 25-ը առաջին երաժշտականում, 22-ը՝ երկրորդ:



- ▶ 2018 թվականի ընթացքում 307 հազար դրամի չափով հողի հարկի և գույքահարկի արտոնություն է տրվել 45 զոհված ազատամարտիկի ընտանիքի
- ▶ հաշվետու տարում ևս շարունակվել է հարկատուներին խրախուսելու քաղաքականությունը.

Մասնավորապես, Էջմիածին քաղաքի թվով 937 հարկատուների տրամադրվել է գույքահարկի գծով՝ 6 մլն 101 հազար դրամի, հողի հարկի գծով՝ թվով 1123 հարկատուի՝ 8 մլն 178 հազար դրամի հարկային արտոնություն:

- ▶ Կարկուտից տուժած թվով 79 հողատերերի տրամադրվել է հողի հարկի գծով 100 % արտոնություն՝ 1 մլն 17 հազար դրամի չափով
- ▶ Շարունակվել է հետևողական աջակցության ցուցաբերումը Արագածի զանգվածի ծերերի տանն ու «Մեր տունը» հասարակական կազմակերպությանը:
- ▶ Քաղաքացիներին, այդ թվում՝ սոցիալապես անապահով Էջմիածնեցիներին, քաղաքապետարանի մասնագետները ցուցաբերել են անվճար իրավաբանական աջակցություն, խորհրդատվություն:



- ▶ Շուկայականից ցածր գներով հողօգտագործողներին տրամադրվել է 1351 պարկ ագրոտական, 226 պարկ կալիումական և 285 պարկ ֆոսֆորական պարարտանյութ:

- ▶ Մայիս ամսին կարկուտից տուժած հողօգտագործողներին, որպես օգնություն տրամադրվել է 215 պարկ ագրոտական պարարտանյութ:



ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ

Արտաքին կապերի ոլորտում իրականացվող աշխատանքներում առանցքային տեղ է գրավում Էջմիածնի քույր քաղաքների և միջազգային կառույցների հետ համագործակցությունը:

2018 թվականին այս ոլորտում եղել են հաջողված և արդյունավետ համագործակցություններ:

Էջմիածնի համայնքապետարանը ակտիվորեն շարունակել է շփումները քույր քաղաքների հետ: Մասնավորապես.

- Էջմիածնի համայնքապետարանը, Երևանի SPFA ֆրանսախոսների ակումբը և Էջմիածնի Խ. Աբովյանի անվան թիվ 4 հիմնական դպրոցը համատեղ ֆրանսերենի անվճար ուսուցման ծրագիր են իրականացնում, որին մասնակցում է 25 աշակերտ: Դասավանդում է Երևանի պետական համալսարանում ֆրանսերենի 28 տարվա դասավանդման փորձ ունեցող ուսուցչուհի Կարինե Շահբազյանը:



Այս պահի տվյալներով կարելի է ասել, որ աշակերտները տիրապետում են լեզվին A1 մակարդակով:



➤ Էջմիածնի քույր քաղաք ֆրանսիական Իսի և Մուլինո քաղաքի հետ համատեղ ներդրմամբ Էջմիածնի թիվ 10 Շուշան մանկապարտեզում իրականացվել են վերանորոգման աշխատանքներ:

Հիմնանորոգվել են խմբասենյակների սանհանգույցները:



ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Համաշխարհային ժառանգության քաղաքներ» կազմակերպության հետ համատեղ իրականացվել է «Երիտասարդներն համաշխարհային ժառանգության ճանապարհին» ծրագրի:



Էջմիածնից ծրագրին մասնակցել են թիվ 5 և թիվ 10 ավագ դպրոցները, որոնք համապատասխանաբար համագործակցում էին Ռուսաստանի Մանկտ Պետերբուրգ քաղաքի և Պորտուգալիայի Էվորա քաղաքի դպրոցների հետ:

- Շարունակվել է հետաքրքիր մշակութային գործակցությունը Ճապոնիայի դեսպանության հետ:

Եղ. Թադևոսյանի անվան գեղարվեստի դպրոցում անցկացվել է «սումի-է» գեղանկարչության վարպետության դաս:

Վարպետության դասը դպրոցի սաների համար անցկացրել են Իկենոբոյի Սոկատոկու պրոֆեսոր տիկին Յամադա Միդորին և տիկին Օլգա Մելիվանովան:



Իսկ քաղաքապետարանի նիստերի դահլիճում կազմակերպվել է Ճապոնական ֆիլմի ցուցադրություն:



2018 Տարեկան
հաշվետվություն

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

2018թ. Էջմիածնի քաղաքային առօրյան լի էր մշակութային իրադարձություններով, որոնք նախատեսված էին տարբեր նախասիրությունների և հետաքրքրությունների տեր մարդկանց համար:

Մշակութային ծրագրերից հատուկ հիշատակման են արժանի Կոմիտասյան օրերը՝ Վարդապետի 150-ամյակին ընդառաջ:

Էջմիածնում ներկայացվեց Կոմիտասի ժառանգությունն իր բոլոր շերտերով:



2018 Տարեկան
հաշվետվություն



Էջմիածնեցու առօրյան հագեցնող ծրագրեր էին ամռանը կազմակերպվող համերգային ժամանցային միջոցառումներն ու բաց կինոդիտումները շաբաթ և կիրակի օրերին, ինչպես նաև տարբեր թաղամասերում կազմակերպած բակային ճամբարները:





The press of Ejmiatsin Municipality www.ejmiatsin.am



Էջմիածնի քաղաքապետարանի ենթակայության տակ գործող երաժշտական և գեղարվեստի դպրոցներում, ինչպես նաև Կոմիտասի անվան մշակույթի պալատում արտադպրոցական ուսուցում է ստացել շուրջ 1100 սան: Այս հաստատություններ հաճախող սաները ողջ տարվա ընթացքում ինտեգրված են եղել քաղաքի մշակութային կյանքին՝ մասնակցելով Էջմիածնում կազմակերպված ավելի քան 200 մշակութային միջոցառման:


Մեր հաստատությունների սաները հաջողություններ են ունեցել Հանրապետական և միջազգային մրցույթներում, արժանացել դիպլոմների և պատվոգրերի:



The press of Ejmiatsin Municipality www.ejmiatsin.am



The press of Ejmiatsin Municipality www.ejmiatsin.am



The press of Ejmiatsin Municipality www.ejmiatsin.am

2018 Տարեկան
հաշվետվություն

2018-ին տոնեցինք Էջմիածնի 2703-ամյակը



2018 Տարեկան
հաշվետվություն

2018-ին ակտիվ են եղել նաև Էջմիածնի թանգարանները

Քաղաքապետարանի ենթակայությամբ գործող թանգարանները գործում են անվճար:



Հովհաննես Հովհաննիսյանի տուն-թանգարանում անցկացվել են բազմաբնույթ միջոցառումներ, ցուցահանդեսներ, գրքի շնորհանդեսներ՝ հանդիսատես-գրող ջերմ շփման շրջանակներում:

Գեղեցիկ միջոցառմամբ նշվել է տուն-թանգարանի հիմնադրման 70-ամյակը:



Ողջ տարվա ընթացքում բազմաբնույթ միջոցառումներ են կազմակերպվել Էջմիածնի պատմաազգագրական թանգարանում: Կանանց տոների առթիվ ցուցադրության են դրվել կիրառական արվեստի ասեղնագործ նմուշներ, Հայաստանի առաջին հանրապետության և Մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին նվիրված՝ «Հաղթանակ հանուն հայրենիքի» ֆոտոցուցադրություն, հայկական տարազների ցուցադրություն Լուսիկ Ագուլեցու հավաքածուից և այլ հետաքրքիր ցուցադրություններ:



2018 Տարեկան
հաշվետվություն

Էջմիածնում գործող թանգարաններն այս տարի ևս միացել էին «Թանգարանների գիշեր» նախաձեռնությանը: Մշակույթի այս օջախներում կյանքն աշխուժացնելու համար թանգարաններն ակտիվ համագործակցել են դպրոցների հետ:



Նվիրատվության և բյուջետային միջոցների հաշվին գրադարանի գրքային ֆոնդը հարստացել է 1582 կտոր գրքով:

Գրադարաններում կազմակերպվել են հանդիպումներ, գրքերի քննարկումներ, մեծարման միջոցառումներ: Մասնակիցները եղել են գրադարանի մշտական ընթերցողները և ՀՈԱԿ-ի աշխատակիցները:



ՄՊՈՐՏ

Էջմիածնի մարզադպրոցում գործում են 13 մարզաձևերի մոտ 45 մարզախմբեր, որոնցում ընդգրկված է 522 մարզիկ:

Նրանց հետ աշխատում են 25 մարզիչ, որոնցից 5-ը՝ ՀՀ վաստակավոր մարզիչներ, 5-ը՝ սպորտի վարպետներ:



Սպորտդպրոցում մարզումներն անվճար են, ֆինանսավորումը կատարում է քաղաքապետարանը



2018 թվականի ընթացքում մեր մարզիկները տարբեր որակի 56 մեդալ են նվաճել ՀՀ մեծահասակների, երիտասարդների, պատանիների հանրապետական և Աշխարհի ու Եվրոպայի առաջնություններում ու միջազգային մրցաշարերում, որից 20-ը՝ ոսկի:

Տարվա ընթացքում Էջմիածնում անցկացվել են լայնամասշտաբ մարզական միջոցառումներ, որոնցից առավել հիշատակման են արժանի մարզաձևերի փառատոնը և Էջմիածնի 2703-ամյակին նվիրված մարզական միջոցառումները



Հարգելի՛ էջմիածնեցիներ,

Դուք ունեք ցանկացած հարցով քաղաքապետարան դիմելու, ձեր առաջարկներն ու
դժգոհությունները ներկայացնելու բազում խողովակներ՝ ընդունելություն
քաղաքապետի մոտ, հետադարձ կապ քաղաքապետարանի պաշտոնական կայքի
միջոցով, շփումներ սոցիալական ցանցերում և, իհարկե, քաղաքապետարանի թեժ
գիծը՝ 5-27-27 հեռախոսահամարով: